

բու կզգիին մէջ թողուցի: Հարոնդ Սեմյոյի որդւոյն, կը հսկես կանգուն մեր քարաժայռ ներսուն վրայ, հեռուէն նշմարելու համար կուկուլլինի նաւերր: Աւաղ, ընդարձակ ծով մը կը թաւալէ իր ալիքները ամուսնոյդ ու բու միջեւ: Իր կոհակներուն ճերմակ փրբ-փուրբ՝ պիտի խարէ աչքերդ՝ գիշեր ատեն, զանոնք աղբիղիս առաքաստները պիտի կարծես: Փաշուէ՛, վասն զի խաւարը ցարտ է. քաշուէ՛, սէ՛րս, գիշերուան հովերը կը ստոնցընեն անուշիկ հրապոյրներդ. մտիր սօնալան պալատս, և երազէ՛ հին ժամանակները: Պատերազմին բոցերը չմարած՝ չեմ կրնար բազուկներուդ մէջ նեաուել: Ո՛վ կոնալ, խօսէ ինձի փառքի և պատերազմ-ներու վրայ, հանէ զանի մաքէս, վասն զի շատ պիտի է ինձ, Սորգլանի գուսարը, ձիւնագեղ ծոցով, սպնիսդ մագերսով:

— Զգուշացիր, այս ժամուս, Սիվիանոսի զաւակներէն, պատասխանեց քաջ և զգոն կոնալը. զրիկ՝ զունդ մը մարտիկներէ՛կ՝ լրանելու՝ մութին մէջ՝ Սուրանի բանակը, և խաղազութիւն կուզեմ, մինչև Մորուենի զաւակներուն գայը, մինչև որ ֆիլիպալ՝ գիւցազներուն առաջինը, շուրացընէ մեր պաշտերուն վրայ յաղթութեան աստղը...»:

Կուկուլլին բախեց իր վահանը. այն մարտիկները՝ զօրս բազուն ընտրած էր հսկելու այն գիշեր՝ սկսան շուել. բանակին մնացորդը, պատկած բլրան վրայ, կը ննջէր մութին մէջ, հովերու մրմունջներուն:

Եւր մեռած գիւցազներուն ստուերները կը թափառէին անոնց շուրջը, հեծած իրենց ամպերուն վրայ, և Լեւոսայ ընդարձակ լուծութեան մէջ, կը լսուէին հեռուն խոպոտ ձայները մահազուշակ ուրուականներուն:

Թարգմ. Լ. ԱՐՄԵՆ ՂԱՅԻԿԵԱՆ



ԱՐՇԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵՒԵԼԷ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(Շար. սես էջ 246)

ԺԷ.

Վերջին գործք Ս. Լուսաւորչին եւ փոխումն:

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻ քահանայապետական վեճակն կրկին հաստատուած պայծառուցաւ Երկիոյ ժողովոյն գումարմամբ և Արեւստակիսի առաքմամբ. այնուհետեւ իր հայրն, որ և բոլոր Հայաստանեայց հոգեւոր հայր, իր վերջին անխոնջ ջանքը քունի մի տարի ոչլ տարածեց, ըստ որում զրէ Ազաթանգեղոս, և արժան է կարգալ (ձիւէ զուխը), յետ ընդունելութեան իր որդւոյն և յաջորդին բերածները. « Աւեալ զիւր վիճակն՝ « զՀայաստան երկիրն՝ պայծառացեալ « Հանդերձ արքային Տրդատու, գամենայն « աւուրս կենաց իւրոց լուսաւորէր: Ապա « յետ այսորիկ սկսեալ երանելոյն Գրիգորի « ճշաս յաճախագոյն, դժուարապատումս, « առակս խորիմացս գիրալուրս յարմարեալ « ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգա- « թէականաց, լի ամենայն ճաշակօք կար- « գեալս և յարմարեալս աւետարանական « հուստոյն ճշմարտութեան . . . Զաւետա- « րանական ընթացսն և զվերակացութիւն ե- « կեղեցւոյ սրբոյ՝ շնորհօք Աստուծոյ առանց « պակասութեան տանէր. և առաւել փութայր « զուն եղեալ գամենայն որ յորդորելով առ « ի բարեացն քաղաքութիւն, զգայդ և զցե- « թեկ պահօք և աղօթիւք և ուժգին խըն- « դրուածովք: զգուշացուցանէր ամենայն « մարդոյ. . . Եւ այսպէս հանդերձ թագա- « ւորան և ամենայն աշակերտելովք զա- « մենայն ժամանակս իւրեանց ընթերցուա- « ծոց գրոց ծախէին զտիւ և զիշեր. և նովին « ծաղկեալք և շահաւետեալք, և օրինակ բա- « թեաց ուսումնասէր առնթերակայից ցանկ « լինէին»: — Ո՛վ են արձրերակայքն. —

Գուցէ իր վիճակին Հայաստանի մերձաւոր
օտար վիճակը կամ եկեղեցիքը: — « Արդ այսու
« օրինակաւ դամենայն աւուրս կենաց առա-
« քելարան առաքելագործ վարեալ՝ գշեա
« հրեւեայ Հրամանացն ընկալելոց, մինչեւ ի
« վախճան կատարածին զայս սուներ տամ
« յամէ, քաղաք ի սերն Քրիստոսի՝ յոսաս
« արեա »: — Գեղեցիկ և խոր վերարան
Լուսաւորչի արգեանք. ոչ լոկ վառեալ բոր-
բոքեալ ի սէրն՝ այլ և քաղաք ի սէրն Քրիս-
տոսի. արժանի մտածութեան և Հիացման: Այսու և
Հեղինակն Ազաթանգեղա՝ կըքէ իր
բովանդակ պատմութիւնը. գրոց պարզ յի-
շատակարան մի յարելով ի նոյն, և ուղղե-
լով առ Տրդատ, առ որ նոյնպէս նուիրած էր
և ի իր յառաջարանը. ոչ յիշելով ոչ ասոր
և ոչ Գրիգորի, (ի պատմութեան երկու վի-
ճագոյն գործող անձանց) կենաց վախճանը,
գուցէ անոնցմէ առաջ ինքն վախճանած էր:

Ոչ պակաս քան զգործս կենացն՝ սխրալի
է և նշանաւոր, մանաւանդ Հոգեկիր ան-
ձանց՝ իրենց մուշ և պատրաստութիւնն ի
մաշ: Լուսաւորչի Համար շատ Հեղ գրեր
կրկններ էր Ազաթ. (ՃԻԱ), և տեղ մի յի-
շեցիկնք թէ ինչպէս « ընդ ժամանակս ժամա-
« նակս ի լերինս ելնելն », այլեւայ վաճառ-
բէ կրօնաւորներ Հեաը աճըլով, և անոնց
Հաւասար ճգնելով. և երբ ամէն կողմ եպիս-
կոպոսարաններ Հաստատեց՝ այլեւայ ազա-
տութեամբ, կ'ըսէ (ՃԻԲ) « Ըստ գաւառաց
« գաւառաց երթեալ ընտրէր անձին իւրում
« կայս հակգտեան յանպատ տեղիս, և անդ
« բնակէր, և յանպատիցն լուսաւորէր զա-
« մենեսեան »: Էւ թէպէս Տրդատ (ՃԻԳ)
« շատ աղաչեաց զԳրիգոր՝ վասն Հոննպա-
« զորդ առ նմա կալոյ, զի ընդ ինքեան չըլե-
« ցուցէ, սրում ոչ Հաւանեալ շառնոյր ի
« յանձն. այլ յանպատ տեղիսն Հաճեալ ընա-
« կաթեամբ՝ պաշտօնքն կոխեալ զինքն, զի
« մի տայէ Հպարտութիւնն բարձրանալ կո-
« խել զինքն »: Գեղեցիկ է այս իմաստ Ա-
զաթանգեղի. Լուսաւորչի խոնարհութեամբ
ինքզինքը կոխէր նուաստացըներ, որ չըլլայ
թէ իր Հրաշալի գործերն և ի Հասարակաց
Հոշակին և գովութեանն Հաւանելով Հպարտու-
թիւնն յաղթէ կոխէ զինքը, և մեղանչել տայ:

Այսպէս մտածելն և ուրիշ սուրբ Հոգեկիր
անձնիք. ոչ եթէ Գրիգորի առաքելութեան
այժը պոխտս Համարելով, այլ արժէքն և շնորհքն
չափազոնց, եթէ կարելի է այսպէս ըսել, զի
եթէ զերազոյնք քան զմարդիկ շնորհայից
Հրեշտակ Հպարտացան և անկան, աւելի եւս
կըրնայ մարդ զրգոտիլ և կործանելի: Այս բա-
նէս սիրողաբար վախճալով Գրիգորի սրտակից
բարեկամքն, (մանաւանդ Հեթանոսութենէ
դեռ նոր արթընցած ազգին՝ անոր վրայ ու-
նեցած Համարմունքէն, որ գուցէ թէ և դեր-
մարդկային և աստուածային անձ մի կարծելն
գնա, ինչպէս և յետիկ դարուց մէջ անպամ
գառած են ույապէս մտածողք), Հոգեկիցքն
ճշմարտքն Անտոն և Կրօնիղէս, մտերմութեամբ
իրեն խորհուրդ տային, որ այնուհետեւ՝ մինչ
ամեն բան կարգի գրեր էր և իր որդին այլ
իրեն տեղ քաճանայապետ, թողու քաշուի
անձանթ անչէն կողմ մի, և ծածկուի ի
մարդկանէ:

Կ'արժէ ներկայացնել Հոս՝ այս յիշեալ
երկու սուրբ ճգնաւորաց՝ (զոր ինքն Գրիգոր
Հաներ բերեր էր իրենց Հայրենեաց ճգնա-
բանն) անգամ մի սխրալի և սխրալի կեր-
պով իրարու Հանդիպին Տրսոնոյ վանսրէից
և անպատաներու կողմերում, ինչպէս պատմէ
սկանատետն Չենովր: Երբ Հառովէն դա-
նալով Տրդատ զԳրիգոր Հեան առած եկաւ
այս կողմերս, փափագեցաւ տեսնել այն
ճգնաւորները. Չենովր այլ Հրաւիրեց զԳրի-
գոր՝ որ գալ և իրեն յանձնած վանատեղւոյն
Հիմնարկած եկեղեցին այլ կանգնէ: Թագա-
ւորն և Հայրապետն խաւրեցին զԱրքիանոս
մեծ եպիսկոպոսն որ երթայ բերէ իրենց ճգնա-
ւորները. երբ եկաւ սա ասոնց ճգնարանը և
չգտաւ զանոնք՝ Հարցուց, և բարն թէ շատոնց
է որ անոնք իրենց խցիկները թողր և շեն
գարձեր. երեք օր վնասեցին Արքիանոսի Հեա-
չորրորդ առտուն կանուխ բլրոց վրայէն և
անտառի միջէն սաղմոսերգութեան ձայներ
լուսեցան. երբ աւելի մօտեցան Արեւու-
բլուր կոչուած տեղւոյ ազրիբի մաս, Անտոն
և Կրօնիղէս իրենց քանի մի ընկերով այն
արշալուսոյ և կոննաչ երկրի պարզութեան
մէջ երեւցան երգելով. « Տոյց ինձ ճանապարհ՝
« յոր գնանք »: Արքիանոս այլ ին կողմանէ
փոխալ էն երգել սուաւ. « Հոգի քո բարի ա-

« Բարբոսեանց ինձ » : Երբ հանդիպեցան իրարու՝ ճգնաւորքն ողունենցին զգիսկապանս՝ ըսելով, « Բարբի՛ եկիր, ճանապարհորդ խա-
 « դաղութեան » : նա պատասխանեց. « Բարբի « դուք զձեզ, օթիվանք Հոգոյն Սրբոյ » : կամ, « Բարբի և խաղաղութիւն ձեզ, մշակք « Աստուծոյ » . սպասակետիք սուտու որ թա-
 գաւորն Տրդատ և Ս . Գրիգոր եկեր են զի-
 բնէք տեսնելու . անոնք այլ ակետիք ձեզ, ըսին, որ Աստուած այսպիսի լու ժամանակ պարգեւեց մեզ, զսասանայ Հալածեց, և սուրբ Հաւատարկ Հաստատեց : Իսկոյն Արիւնձո՞ւ սուր-
 կաւագներ զրկեց առ Ս . Գրիգոր և առ Տրդատ, որ Արձան քրմայետին յաղթուած տեղն էր . և երբ լսեց՝ ուրախանալով Հրամ-
 մեց որ խաչարձան մի կանգնեն այն տեղ և կոչեն Անտեաց խաչ, Ապա Ս . Գրիգոր իր Հետ եղած բոլոր եկեղեցականներով թափոր կազմելով, խնկօք և Լահու՛ք՝ երգելով և ան-
 տանները Հնչեցընելով, ելան եկան ընդ ա-
 աջ ճգնաւորացն, զորս տեսնելով Ս . Գրի-
 գոր, ողունենց . « Բարբոք դուք զձեզ՝ առա-
 « օսք բարեաց » . անոնք այլ պատասխա-
 նեցին, « Բարբի եկիր արուսեակի արդար « խաղաղութեան որ զտիեզերս լուսաւորես » .
 այս տեղս այլ կոչեցաւ Անտեաց բոլոր : Ապա
 եկաւ Տրդատ Հոմբուրեց ճգնաւորները և
 օրհնութիւն խնդրեց . նոքա այլ Հոգեւոր խոս-
 քերով ուրախացուցին զնա և իրեն Հետ ե-
 դողները . յետոյ աղօթք և պաշտօն կատա-
 րեցին, այլ և մարմնաւոր ուրախութիւն :
 Աւելի պակաս իբրեւ 15 օր այն կողմերը
 պարտելով՝ ուր որ առաջուց կործանած Դե-
 մետրի և Գիտանէի տուճարն էր՝ Հօն մեծամեծ
 քարերով բարձր խաչ մի կանգնել տուաւ թա-
 գաւորն և նաւակատիք ընել, այն հանդիսից
 եկած բազմութեան մարդկան թիւն այլ զրել
 անոր վրայ, որ եղաւ 60,000, կամ զրոց ուրիշ
 օրինակի Համեմատ՝ 100,450, թաղաւորին
 զօրքն և Գրիգորի Հետ եկողներն այլ միանգա-
 մայն Հաչուելով : Այս յիշատակն սպազայից
 թողով՝ բաժնուեցան ի ճգնաւորաց և ի նոր
 օրրազանեակ տեղեաց՝ թագաւորն և Գրիգոր՝
 իրենց պաշտօնէիւք, և զհնուորական և եկեղե-
 ցական երգոց միախառնութեամբ, որոց ձայնք
 և արձագանքը կարծեմ՝ ոչ այնքան յանտա-
 ւաց և ի բլրոց Հնչէին՝ որքան երկընդէն :

Չայս և նախընթաց դիպուածներն այլ յի-
 շելով՝ անկարելի թուի որ Հոգի և սիրտ ունող
 ու ներկայ և հանդերձեալ Հայրենիք յիշող անձ
 մի՛ չըզդայ իր մէջ նուրբ և սուրբ ձայն մի,
 Հոգոր ազգու՛մ մի : Այսպիսիք էին իրք և կիրք
 յԱրշալուսի անդ և յԱրեւածագն Լուսաւո-
 րութեան Հայոց . որովք ոչ միայն կրօնական
 անձինքն զմայլեցան, այլ և զօրականք և
 սրբաւնիք . որք թերեւս ակելի երկար օրեր
 փափագէին մնալ այն տեղ . բայց յանկարծ
 պատերազմական փոզեր Հնչեցին, իմացընե-
 լով՝ որ թէպէտ Տրդատայ ի Վրաց կողմ
 խաւրած գունդն յաղթեց վանեց Հիւսիսային
 Հրոսակները, սակայն անոնք նորէն զօրաժո-
 ղով ընելով՝ առաջ կու գան . Հարկ էր որ
 փութիս Տրդատ անոնց դէմ :

Իսկ Գրիգոր՝ ըստ օրբան վկայութեան
 Ազաթանգեղի և Խորենացոյ, յետ դարձի
 Արիստակիսի ի Նիկիոյ՝ ասոր յանձնելով իր
 աթոռն և Հովուպետական գաւազանը, « այ-
 « նու Հետեւ ոչ եւս երեւեցաւ յայտնեալ ու-
 « մեք », ինչպէս կ'ըսէ երկրորդն (Բ . ԴԱ),
 կրկնելով իր առաջուց ըսածը (Ղ . « Գար-
 « ձեալ ի նոյն լերինս՝ ոչ ումեք յետ այն
 « յաւելայր երեւել, մինչեւ ցվախճան » : Ո՞ր
 են այդ լերինք . — շատ տարի առաջ այլեւայլ
 լերանց մէջ ճգնէր Գրիգոր, ուսկից երբեմն
 իջնելով այցելէր իր Հօտին . բայց այս վեր-
 ջին անգամ՝ եկեղեցւոյն և աշխարհի բոլո-
 րովին Հրոժարական բարեւ տալով, քաչուե-
 ցաւ Եզընկայ և Գարսնաղեաց (Կամախայ)
 միջոց եղած Սեպուհ լեւան քարայրի մի մէջ,
 ուր քիչ առաջ Հոովմէն եկած Հոնիփոսիմանց
 մէկ ընկերն՝ Մանի՛ առանձնացեալ ճգնելով
 վախճաններ էր, և նոյն ինքն Գրիգոր զինքը
 զտեր, Հոգին Հոգացեր, մտրվինը թաղեր, և
 տեղը ժառանգեր էր, որ և անոր Համար կու-
 չուեցաւ Մանուկայ—այրք : Այս բանս այլ զար-
 մանալի նախախնամութեամբ . Գրիգոր լու-
 սաւորչական կեանքը սկսի Հոնիփոսիմէով,
 վերջանայ անոր ընկեր՝ Մանիով :

Խորենացոյ ճիշդ Հաչուով՝ իր Լուսաւոր

1. Իրեն Համանուն Manne, ճգնակից և ժա-
 մանակակից կայս մի եղած է ի կողմանց Գաղ-
 ղեոյ, որ յիշատակուի յՅ Հոնիփոսիմբ ամառոյ
 20

լուծեան սկիզբն կ'ըլլայ Տրդատայ թագու-
 արութեան 17դ տարին, որ է Քրիստոսի
 301-2, վերջինն՝ յետ 30 տարույ (332)։ Ո՞ր-
 քան ժամանակ այլ ապրած է յետին աւանձ-
 նութեան մէջ. և ի՞նչպէս. — Հարցընելու է
 իր պահպան հրեշտակին, որ՝ ըստ աւանդու-
 թեան՝ հրեշտակաց ինն դասուց շարորդէն
 էր։ Հաւանորէն քանի մի տարի ապրած է. **բայ մեր ոճով տարիք ըսելով. այս ըստ**
իրեն՝ կենաց և մահու մէջ վիճակ մ'էր, ա-
ւելի անմահութեան մօտ քան մահու. և այս
այլ յարմար մեր Եղիշէի յիշած պղատոնակոն
աւածին, «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ
« իմացեալ՝ անմահութիւն է » . ըստ այսմ էր
« Քրիզոստոմի. և այն ըստ մի արքայած տա-
րիներն՝ մասնաւոր թէ ամիսներն և օրերն՝
մէկ մէկ սաստիճանք և ունկոխք էին երկ-
նաչու սանդղոց, մօտէ մօտ առ Աստուած
վերցընելու. վերջապէս, ի՞նչպէս եղաւ վախ-
ճանն. — զայս այլ հրեշտակաց Հարցընելու
է։ Սակայն քիչ մ'ալլ մարդկային մտաց ոյժ
մը տալով՝ և մեզմէ դարերով առաջ մեր նախ-
նեաց խորհրդածութիւնը քննելով՝ լաւագոյն
համարիմ կարգաւ մէկ հոգեբոգոյի մի Շա-
րականն՝ այս խնդրոյս նկատմամբ, հեղինակն
ըլլայ Խորենացի, ըլլայ Եզնկայեցի. այն շա-
րականն՝ որ իր առաջին բարին համար Լե-
դիքը կոչուի սովորաբար, և մի է մեր ընտիր
խորագրած, ներշնչեալ շարականներէն .
միանգամայն և Քրիզոստոմի մահուան և մարմ-
նոյն գտուելուն աւանդութիւնները շոշափէ,
իր շատ անգամ լերանց քիչ առաջ։ Իրաւամբ
և յալոյ գիւտով՝ հեղինակն կու սկսի զու-
լութեամբ լերին՝ որ ընդունեցաւ, ժածկեց
և պուհեց զՍուրբն, այնպիսի Սուրբ, որով
կընար լեռն զերգանցել ի մէջ լերանց, զորս
համարձակ կանչելով՝ կ'ըսէ. « Լերինք ամե-
« նայն, այսօր ցնծացէք ընդ մեծապայծաս
« փառսն Սեպուհոյ գերագանց յերին. քանզի

« ի նմա ընտելեալ Սուրբն Քրիզոստոմ, սիւն
 « լուսոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ.
 « որով ցնծան ի փառս վերնոյն Սիոնիւի. —
 « Որ (Սեպուհ) առաւել խորին խորհրդով
 « ինչոպ քան զԱրարատեանն բարձր Մասիս.
 « քանզի ի նմա հանգեալ Սուրբն Քրիզոստ.
 « տակասեան ապրեցոցցիւ ի հոսանքս մեղաց
 « էր։ Հայաստան ազանց. որով փրկիմք միշտ) ։
 « Գ. և Գ տունք շարականին բողոքատեն զՍե-
 « պուհ ընդ Սիոնյ և ընդ Կարմեղոս լերանց,
 « փայլեցընելով զՔրիզոստ՝ անոնց վրայ ելլող
 « Մովսիսի և Եղիայի մէջ։ — Ե տունն ըստ
 « աւանդութեան յիշեցընէ հրեշտակաց երկու-
 « նայն և այցելել առ Լուսաւորիչին. և յայսմ
 « բաղդատէ ընդ Եսայի մարգարէի. « Համամ
 « նմանեալ անգլյածնին Եսայեայ կայծակ-
 « նամաբուր սուրբ մարգարէին՝ Տէր Քրիզո-
 « ստոմ, վեցթեւեան Սերովբէից կիզել կեն-
 « դանեաց՝ եղեւ անսանաղ՝ հոգեով կենդա-
 « նին. զանդընդախոր զձորն՝ երկնից կամար
 « յօրինեաց) ։ Քեղեցիկ ճարտար համեմա-
 « տութիւն՝ ձորայ խորութիւնն երկնից բարձ-
 « րութեան զուգելով։ Գարձեալ Չ տամբ Սուրբ
 « Քրոց մէջ սրբապնեալ Սանիր և Ահմեմոն լե-
 « բանց բաղդատէ զՍեպուհ, ուսկից՝ շոսայ
 « աղիւսն Քրիզոստ՝ այն կողմի երկիրը պարար-
 « տացընելու համար՝ բարեհամ ջրոց աղիւր
 « բղիւնցուց։ — Ե տունն լերին գագաթէն վար
 « կ'իջեցընէ ի Մանեայ — Այլն, բաղդատելով
 « Բեզգեհիմի սյրին, ուր յորդորեցան դասերքն
 « Եւայի՝ կուսութեամբ ըլլալ մայր Քրիստոսի,
 « իսկ հօս յորդորին մարդիկ մաբուր վարզով
 « ազատանալ ի մեղաց։ — Ը տունն դարձեալ
 « լեռ մի դիտէ, անհամեմատ սուրբ և վեհ
 « լեռ. Գողգոթա՛. յորոյ վրայ խաչն Քրիստո-
 « սի կանչեալ զաշխարհ փրկեց. ստոր՝ անկա-
 « բելի էր քան մի հուսաւարելի. սակայն մեր
 « հեղինակն՝ այն Ս. Թաշին դէմ հանէ աւան-
 « դութեամբ Տրդատայ սուրբն՝ ձեւացուցեալ
 « Խաչ մի և նուիրուած խաչեցեալ կենարարին.

1. Աւանդութիւնն կ'ըսէ թէ այս սուրբ ի
 Մեծն Կոստ. կայսերէ տրուած է առ Տրդատ և
 կոչուի հայնառանի, իբր թէ որոյն մետաղեայ
 նեւթն հաւերու ստամբուց մէջ իբրեւ կուր
 կ'ըլլուած և հալուած ըլլայ, և անոնց զուր

ձգելէն վերջը՝ ժողոված, Հայեցուցած և կազմած
 սուրբ. և թէ այսպէս կ'ընեն ի կողմանս Պար-
 սից, աւելի հաւանական էր Պայնառանի կոչել
 զսուրբն։

« Զինն սրբայական՝ ապամանն զործի՛ կե-
 « նաց արքային (Քրիստոսի) ի կենաց զոր-
 « ծիս նուիրեալ. որով փրկեացէ զմեզ յաւի-
 « տենից մուշուսնէ » : Երկու խաչերով իրենց
 տեսաքն այլ լռելեայն կամ հեռուանց իրա-
 բու համեմատին, Քրիստոս և Տրդատ : —
 Ք տամբ զարձեալ զառնայ աւ Լեռան Աե-
 պուհ, և բազդատէ կամ նմանցնէ՛ այն ան-
 նիւթ սասուածային լերան, որոյ համար հար-
 ցընէր մարգարէն, թէ ո՛վ կըրնայ ելնել հօն
 և քնակել ի խորանն սուրբ. և համարձակ
 ի վերայ բերէ, թէ կըրցու Քրիզոր. « Զոր
 « և տեսաք առ Սուրբն Քրիզոր կատարեալ » :
 — Տասներորդ տունն յիշեցնէ զաւանդու-
 թիւնն՝ թէ Աերովբէ՛ գերագոյնք ի դասս
 հրեշապակաց փափագելով իննէին գային « Ի
 « տես մարմնով ճղողոյն. (անոր համար և.)
 « պատիւ տեղոյն սնուամբն կոչէ » . այսինքն
 լերան Քամ այրին մտ տեղ մ՛ալ Աերովբէք
 կոչուեցաւ և ուխտատեղի մ՛եղաւ : — Աեր-
 չինն (յԱ) տունն ստուգագոյն աւանդու-
 թիւնն է, թէ այն կողմերում արածող հո-
 վիւք՝ զիպուածով գտեր են (ճրքան ատենէ
 վերջ) Լուսաւորչի անշնչացեալ մարմինը՝
 քարայրին քով, կամ գիհի ծառի մի խոր-
 ցած փորուածին մէջ կոթընաւ, և շնանշնայով
 ով ըլլալը՝ հօն թաղեր են. « Հովուին հսկողի
 « (Քրիզորի)՝ և Քաջ Հովուին (Քրիստոսի)
 « պատկերի (նմանողի), հովիւքն եղին հե-
 « տեռողք. զոր ամփոփեցին՝ զմարմինն մա-
 « քուր, մերձ ի յԱյրն Մանեայ, մեզ դեղ
 « ախտից մաքրութեան. որով սրբութք հոպուով
 « ի թիւնից վիշապին » (սաստանայի) : Այս
 կերպ գտնուելն աւելի հաւանական ի կ'երեւի
 քան որիշ կերպով գրուածն յամանն ի Գայմա-
 աւուրաց, որպէս թէ, հովիւքն ցտած ըլլան
 զմարմինն նստած « իրբու ողջ ընդդէմ ա-
 « բուելից, խաչանման ի վեր ունելով զաջն
 « առաքելական ի վերայ աստուածատեղ
 « պատկերին, և սեղան սուրբ ի փայտէ պա-
 « տուկանէ, և սկիհ և մաղձայ փայտեայ՝
 « պատեալ զիպակ հանդերձիւք ուրբ կտա-
 « աք. և քող ոսկեթել ծայրիւք ծալեալ զուշ
 « դաստառակաւ և եղեայ ի պահարան կտա-
 « սեայ. և զաւագան ի ձախոյ ձեռին՝ հաս-
 « տատելով ի վերայ ծնկացն... Եւ առեալ
 « բերին վէմս մեծամեծս, որպէս եղին իմաստ-

« նացեալք . յԱստուծոյ, և շինեցին շուրջ
 « զնովաւ զմրթնածեւ և բարձրագոյն, զի
 « մի (ոք) հասցէ ի նա, և կապեցին զմրթն
 « զայն օր. և երկրպագեալ գնացին ի խորանս
 « իւրեանց, և պատմեցին ամենեցուն, և
 « փասաւոր առնէին զԱստուած » :
 Մեր եկեղեցատիրաց այլ զրատիրաց այլ
 ծանօթ են Լուսաւորչի վրայօք երգուած ու-
 բիշ շարականք եւս, ինչպէս Յովհ. Եջն-
 կայեցեոյ՝ այրուբնից թուով 36 տունք, գրե-
 թէ բոլոր իր շարարանքները յիշելով և պէս
 պէս զովելով, ուրիշ շարականք այլ իր շորս
 անգամ տարւոյ մէջ տօնուելուն համար .
 զանգան գեղեցիկ տաղեր այլ. նա և ներ-
 բողներ կամ ճուռեր այլեւայլ վարդապետաց
 զործ, յորս նշանաւոր է Յովհ. Սարկաւազ
 վարդապետին. բայց մեր այժմեան պարագ-
 գային կարեւորն և անոնց մէջ այլ վեհագոյն
 այս լերան շարականն էր՝ որ և միակ յիշա-
 սակ անձանօթ կերպով մահուան Լուսաւոր-
 չին. որ ոչ միայն իր խոնարհութեան՝ գե-
 բագանց շնորհք մ'եղած է Աստուծոյ կող-
 մանէ, այլ և պգուութիւն մի նոյն կողմանէ,
 որպէս Մովսիսի անձանօթաբար մեռնիլն Իս-
 րայելացուց համար, որ թանձրամիտ կամ
 շատ սիրաւոր ժողովուրդն՝ երկուբիլն այլ սա-
 տուածական պաշտօնն և պատիւ քտան. նա ի
 կատար Դարաւ լերին անյայտացաւ՝ Միքայէլ
 հրեշտակապետի հովանաւորութեամբ, սա
 Աերովբէից սպասաւորութեամբ ի Աեպուհ,
 որ և կոչուեցաւ իր անուամբ Լեւան Ս. Քրի-
 զորի : Անպատենբու մէջ, մանուանգ յԵ-
 զիպտոս և ուրիշ կողմերու առանձնութեանց
 մէջ շատ Սուրբք անյայտօրէն վախճանած
 են, և յետոյ ոմանք յայտնուեր են ոմանք
 միշտ անյայտ անձանօթ մնացեր, Աստուծոյ
 միայն գիտելիք. բայց մերս Լուսաւորչի՝ ինչ
 որ ըսինք՝ իր և Աստուծոյ կամօք առ Ժա-
 մանակ մի այնպէս մնացեր է, և յետ հո-
 վուաց ձեռօք այնպէս թաղուելուն, ստոյգ
 համարելով զայն, զոր և Խորենացին յիշէ
 « (Բ, Գ) զեղեցիկ խորհրդածութեամբ պարզե-
 լով շարականին վերջի տան և մեր վերի
 բսածնեւր. « Վայելէր իսկ նոցա (հովուաց)
 « որք Փրկչին մերոյ ծննդեանն եղին խոր-
 « հրդածուք, լինել և աշակերտի յըզարկ-
 « մանն սպասաւորք : Եւ ծածկեալ ամս բա-

« զումս՝ աստուածային ինն գոգցես տեսու-
 « թեամբ, իրրեւ զՄոսկովն զայն ի Հնումն,
 « զի մի ի պաշտօն առցի ի դեռտնանաստ բար-
 « բարոսացն ազգաց. իսկ յորժամ սերտեալ
 « Հիմնեցան Հաւառք կողմանցս այսոցիկ,
 « զվնի յետ բազում ժամանակաց՝ յայտնե-
 « ցաւ հգնաւորի ումնն Քաանիկ անուն կո-
 « չեցելոյ, և բերեալ եղաւ ի գերիչ Ֆորդան՝
 « նշխարք Սրբոյն Գրիգորի » : Յետ զայս
 ծանուցանելու՝ արժանապէս լուսաւորչի ար-
 ժանեաց վրայ այլ խորհրդածելով կնքէ. « Սա՝
 « յարեւելից կողմանց (Պարթեւաց) աշխար-
 « Հիս մերոյ արեւելք ծագեալ մեզ, և իմա-
 « նալի արեգական Հոգեւոր ճառագայթ, ի
 « խորին շարութենէ կուպաշտութեան՝ ելք
 « հնամուտ, բարի ոյսաւարած. երանութեան
 « և շինութեան Հոգեւորի առիթ. աստուա-
 « ծային արդարեւ արմաւենի տնկեալ ի տան
 « Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղ-
 « կեալ. և այսպիսեօք ժողովրդովք բազմա-
 « ցեալ. զմեզ ժողովեաց ի փառս և ի գո-
 « վեան Աստուծոյ » :

Եթէ աստուածային յայտնութեամբ եղած
 է լուսաւորչի մարմնոյ գիւտն և փոխադրու-
 թիւնն ի Ֆորդան, ուր պարտէզ մ'ունէր
 ստացուած, հարկ է որ մեծ հանդիսիւ եղած
 ըլլայ, և այն նշխարաց մասն մի աւանուած
 ըլլայ յառաջնորդաց եկեղեցոյն. բայց ստոյգ
 պատմութիւն չկայ այս բանիս. այլ յիշուի
 Ն դարուն վերջերը Չնոն կայսեր հրամա-
 նաւ ըտր մարմնոյն կամ մեծ մասին տա-
 րուիչն ի Կ. պօլսիս, մեայն ալ բազուկը թռ-
 զուով ի Հայս. և յետ քանի մի դարուց ու-
 րիչ մասն եւս բերուած ի Հայս, թէ խնդրա-
 նօք թէ ճարտարութեամբ. և ըստ լատինաց-
 ւոց աւանդութեան՝ զուրիս և այլ մասն նըլ-
 խարաց և շարչարանաց գործեացն՝ փոխա-
 գրեալ ի Նարոյի մեծ քաղաք Իտալիոյ, ի
 վանս կուսանաց, որք և զարգաբար պահեն
 և պատուեն զանոնք՝ Սրբոյն նուիրած եկե-
 ղեցւոյ մէջ, որ տեղացւոց ծառայութեամբ
 Ս. Լիկորիոյ կոչուի՝ փոխանակ Գրիգորիոյ :
 Աստի այլ մանր մատուց ցորեւր են ուրիշ
 քաղաքներոյ, ինչպէս ի Միսսիկն Սիկիլիոյ .
 Կալարիոն՝ Հոգիավովն (Reggio) քաղաքում
 այլ եղած է և կայ եկեղեցի մի յանուն մեր
 Ս. Գրիգորի, զոր Փաբր կոչեն որոշելու հա-


մար Գրիգոր Ա պապէն որ Միսն կոչուի .
 Այս մեր Գրիգորի եկեղեցին էր իմնուած
 կամ նուիրուած է Հօն, ինչ չէ յայտ. բայց
 այսչափ որ ՉՉ դարուն վերջերում պապա-
 կան և եպիսկոպոսական կոնդակօք այդ եկե-
 ղեցին տրուած է Գովիսիկիւսն կրօնաւորաց :
 — Չուտ Հայոց ձեռօք և ծխիւ կանգնուած
 և կանգուն կայ ի Լիվոռնոյ՝ Հայոց եկե-
 ղեցի մեր լուսաւորչին, ի սկիզբն ժԸ դարու,
 և մինչեւ Հիմոյ յարեւն պատարագուն Հօն
 կաթողիկ Հայոց քահանայէ, և որոյ պահա-
 պանք են քանի մի Հայ ընտանեաց սերունդք
 թէ և Հայերէն չգիտեն : Ի Հռովմ այլ եղած
 է եկեղեցի յանուն մեր Ս. Լուսաւորչի սուկէ
 վեց եօթն դար առաջ. Իտալիոյ ուրիշ քա-
 զաքց Հայոց եկեղեցիք այլ գոնէ խորան
 մի նուիրած են իրենց լուսաւորչին, որպէս
 վենետիոյ Հայոց Ս. Խաչ եկեղեցին, ուր և
 քանի մի դար է՝ մինչեւ այսօր պատուի, և
 աւաւել եւս ի խորանին որ ի մեր Ս. Ղա-
 զար կղզով Միսիթարեանց :

Օտար տեղեաց և ազգաց մէջ առ Ս. Լու-
 սաւորչի նուիրուած պաշտօնը կանխեցինք
 յիշել, որ հաւատարեք ըլլայ թէ որքան մեծ
 և ծաւալեալ էր և է տնուն նորա՝ իր կեն-
 դանութեան ժամանակէն սկսեալ և ամէն Հին
 եկեղեցւոյ տօնացուցից և Յայամուտարաց մէջ
 նշանակեալ, ինչպէս առաջ այլ յիշեցինք. և
 թէ նոքա պարզ անուամբ շափ յիշեն զմեր
 Սուրբս (բայ ի Լիվոռնոյի և Նարոյի եկե-
 ղեցիներէն), մեր երախտագէտ Հարք և ազգ՝
 յայսմ մասին ինչպէս լաւ ճանչցեր լաւ այլ
 յարգեն և պաշտեն իրենց անձման Հայրն և
 Լուսաւորիչը. տարին շորս Հինգ անգամ տօ-
 նելով զնա իր այլեւայլ յիշատակօք. աւելի եւս
 նշանակեն Յայամուտարք մեր և կ'ըսեն, թէ
 և ամեն օր տօնէինք՝ շատ չէր. Եթէ ոչ տօն՝
 այլ յիշատակն գրեթէ ամեն օր կ'ըլլայ ի
 ժամերգութեան և ի պատարագի : Իսկ նիւ-
 թականքն՝ եկեղեցիք, մատրուք, վանորայք,
 ուխտատեղիք Հայաստանի և Հայոց գաղթա-
 կանաց յԱսիա և յԵւրոպա՝ ամեն կողմ եղած
 են և կան, և կըրնան անթիւ ըստիւ. նոյնպէս
 կարելի է ըսել թէ Հայոց ազգային և անձուաց
 մտաց և սրտի սիրելի գաղափարաց մէջ ա-
 ուաշինն է իրենց Ս. Լուսաւորչին : Կարելի
 է դարձեալ ըսել, երկու ձայնարձակ զօրաւոր

անուն իրենց յուշոյ տարերք եղած են, մին քրտաքին և միջնորդ, Հայկն, միւսն ներքին՝ Գրիգոր Լուսաւորիկ, ի վեր քան զայլ ամենայն ազգային՝ ոչ սակաւ սիրելի և պանծալի անուանա, այսինքն անձինս :

Ամբողջելով ինչ որ ըսինք այս գրուածիս մէջ իր վրայօք և ինչ որ գրած և ըսած են ընկիւր և օտարք, սկսեալ յԱզգաթանգեղոսի Հայ և յոյն բնագրէն՝ մինչև ի յետին լուսին և իտալացի վկայարանս (յետինքս չորս հինգ գրող և օպագրող ունին Լուսաւորչի վարուց), ընթերցողին կամ խորհրդածողին մնայ երեսակայն կազմել Լուսաւորչի գաղափար մի, որքան մեծ բարձր հրապալի ի միջի մեծաց և հրաշալիաց . որքան լայն է միտքն, և յէրան, լուսաւոր է հոգին . — ասոր տափն իւրաքանչիւրի կարողուանն չափով է, եթէ կարելի է չափ զնկէ այսպիսի Լուսաւորչի մի :

Շարայարեւի Լ. Ղ. Վ. Մ. ԱԻԵԱՆ



ԱՇԽԱՐՀԱԾՆՈՒԹԻՒՆ՝

COSMOGONIE



Ի սկզբանէ մարգս նկատարբի եղած է գիտնալով : Եւ ըստը տիեզերքս և իրեն մէջ բովանդակուած իրեն ռուսից ասայ կիտ են . — այս է աւաստի Արարանս . մեռտին ինդրոսն ըսինքն : — Եւ մարգվայն պատմութեան վրայ ահարբ մը ձգելով կը տեսնենք՝ որ

1. Մեր փափարն է այս և յարդր յօղուածներով պարզել մէջ քանի մթին ինդիքներն, որոնց դեռ մեր ազգն գրեթ ըստրոգին անուզեակ է, և լուսաւորել զանոր արդի գիտութեան լուսափն : Եւ այդ յօղուածնքս հինգ պիտի ըլլան ըստը նշանաւոր նկերնային ըստ աստեալաբութիւննք : անոր կամար կը կանխենք բուսի՝ որ եթէ մեր յօղուածներուն ամեն կետեր կամ երբեքն ամբողջութիւնն ալ ախորհելի ըլլան ամանց, և զանորք նեղութիւն իրենց ընդազատութեան, կը պահանքնք նախ՝ որ մեր յօղուածներուն իւրաքանչիւր կէտերէ՝ զորս կ'ուզեն ներքն, ամբողջովն մէջ սերեն և ոչ թէ՛ կիսապատար և իտազարելով անոնց իմաստը : երբորք՝ կը պահանքենք՝ որ մեր փափարն իւրաքանչիւրին կանխակ փառս սերեն, որով մեր աշխն պարզ են ճշմարտութիւնը որան ներք կ'ընք : երբորք՝ մէջ քանի սուսալով կամ փախաւորելի յատուկ բացատարութիւններով շարապատարեն այն յօղուածներն . որոնց մէջ պիտի խուցըրենք թէ՛ իրենց գլախ եւ համա .

մարգվութեան ի բարանչիւր շրջանին յատուկ գիտութեանը ընդ մ'եզած է լուսնու այդ ծանր ինդրոք : Անն մէկ ժամանակին տուած լուսնու ալ կը զուգընեն նոյն ժամանակի մարգվայն գիտութեան վեհակը կամ աստիւնը :

Իսկ եթէ ընկնէր մարս իւրաքանչիւր շրջանին տուած լուսնուները՝ իրբու կամ աշխարհիս ծագման մասին, կը տեսնենք որ ամեն ազգեր սկզբանէ ի վեր սեւեցեր են իրենց յատուկ տեսութիւնները : Եւ այդ հասանդ տեսութիւններու և պատմութիւններու մէջ ամենն անկի սրբազանն, միանգամայն խորհրդաւորն և ուղիղն իրաւամբ կամարուած է Մովսեսապատու աշխարհածուութիւնն, որ ծածօմ է ըստը գիտնականներու, և որոնց արդի ուղիղ տեսութիւններն լիովին կը կամաւայնին Մովսէսի աստուածաբան զատմութեանը : Կը կատարտ զայդ փիւլիքն զգրելով : Մովսէս

կարծիք ընն ու երբ երեսնոր գիտնակներ և թէ անոնց տարանայ կարեւան նոյնպէս երեսնի նկերնայները : Եւ այս գիտնակներն ու նկերնայներն կարեւորագոյնն են իրան կամարուածներն : Եւ այս գիտնակներն ու նկերնայներն իրան կամարուածներն ըստից պիտի քաղենք մեր փափարն :

Եւ եթէ մեր այս արդար պահանջին նպատակն ուզեն կայրանքով, ճարտարութեամբ յարեալի մեր գեմ, կը յայտարարենք աստուց՝ որ յարգուած մարգս ամենէն զորաւոր փառսն է կ'ընքս : Հետեւարք պատի շնամբարով մեզի, մանաւանդ թէ նշմարութեան անպատուութիւն կամարելով պատասխանելը, մեր լուսնային պիտի կատարենք որ յաղթուած և յարթահարուած են ու ուղղակի մեզս, ալլ մանաւանդ թէ իրենց զրուսթիւններուն վարպետներուն ու կիսիւնիւնիւններուն գրուածներն մէջ բերուած ու քաղուած վերներով :

Եւ եթէ ընթերցող մը ընծագատէ զմեզ՝ բուկով թէ ժիւ-ժիմ գարերու նկերնայներ, ընդպատուանք ալ յիշեր ենք, իրեն թէ՛ կինքան են . այդ ընդպատուանքս նախ կը պատասխանենք՝ որ այդ գարեթը դեռ մեր տեսութեան նորիցնին մէջ են, երբորք՝ որ այս գրքին նարեթերու մէջ քանի նոր նկերնայներու գրուածներն գրեթէ ըստը քաղուած են ժիւ-ժիմ գարերու նկերնայներն : երբորք՝ որ ամենէն երեսնի երբ նկերնայներն ալ յիշեր եւ մէջ թերի ենք նիւնրան են : Եթէ ներքինն և եթէ յարդրներն ենք յակամայն սպրդել վրայպիտի կամ մեր աշխն վրային մէջ քանի կետեր, դիտել կու տանք որ մեր ընկիւր աստեալաբութիւններն ըստ ընդարձակամասով պիտի ըլլան՝ որոց մէջ կարեւորագոյն ամփոփել ամեն կետեր, ալլ պիտի շունար յարեթ ըստարեք, թէ՛ մեր լրացնելու փափարով սուղալայն մէջ . անոր կամար ընթերցողներն ու գիտնականներն ներքուստիս ըլլալով՝ կ'ենք մանամեղ ընկ մեզի սուղալայնը ու կ'ընդարտալայնը :

2. Երեսն . Ա . — Մեր նպատակն զուրս է սուղալայնացնել իս այս պատմութեան վաւերականութիւնը :

3. Georges — Léopold — Frédéric — Dagobert — Baron Cuvier (1769—1832), նշանաւոր գիտնական, մասն ի Mont-Béliard. Հասանալու կամարուած նկերնայներ . թեան աստեղից եզակ ընդան պատմութեան լիակարանին մէջ, ուսուցիչ ընդպատմութեան ի Ecole centrale du Pantheon, և անդակ գիտնական կանաւին : կեղեկարարութեան ալ ուսուցիչ եղաւ . — Հասանալու կամարուած նկերնայներն և բնական պատմութեան փոփոխութեան վրայ լիակենց ըստը կանալար : Հանալայ սնանաններու ճարտարները բացատարն և կե